

**ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**  
 (ներկայացնել պատճեններ, եթե այլ բան նշված չէ)

Դուք պետք է տրամադրեք ՄԵԿ փաստաթուղթ ստորև տրված «Անձնական վկայական լուսանկարով» պունակում ԵՎ ՄԵԿ ԿԱՍ ԱՎԵԼԻ փաստաթղթեր «Անձը հաստատող այլ փաստաթղթեր» պունակում: Բոլոր ներկայացված փաստաթղթերը պետք է պատճենված լինեն 8 1/2 x 11 դյույմ (21,59 x 27,94 սմ) թղթի վրա և յուրաքանչյուր էջում ներառեն Ձեր սոցիալական ապահովության քարտի համարը:

**ԱՆՁՆԱԿԱՆ ՎԿԱՑԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՈՎ**  
 Տրամադրեք հետևյալ փաստաթղթերի ՄԵԿ հստակ և ընթեռնելի պատճեն:

- Նահանգային, տեղական կամ դաշնային գործակալության կողմից տրված վարորդական իրավունքի վկայական կամ ինքնության քարտ, որը պարունակում է Ձեր անունը, ծննդյան թվականը և լուսանկարը:
- Նահանգային, տեղական կամ դաշնային գործակալության կողմից տրված պաշտոնական փաստաթուղթ, որը պարունակում է Ձեր անունը, ծննդյան թվականը և լուսանկարը:
- ԱՄՆ անձնագիր կամ անձնագրային քարտ, որը պարունակում է Ձեր անունը, ծննդյան թվականը և լուսանկարը:
- Ոչ ժամկետանց արտասահմանյան անձնագիր, որը պարունակում է Ձեր անունը, ծննդյան թվականը և լուսանկարը:
- Զինվորական տոմս, որը պարունակում է Ձեր անունը, ծննդյան թվականը և լուսանկարը (դիմերես և դարձերես):
- Զինծառայողի ինձամքի տակ գտնվող անձի ինքնության քարտ, որը պարունակում է Ձեր անունը, ծննդյան թվականը և լուսանկարը (դիմերես և դարձերես):
- ԱՄՆ Քաղաքացիության և ներգաղթի ծառայությունների (U.S. Citizenship and Immigration Services) կողմից տրված օտարերկրացու գրանցման քարտ կամ մշտաբնակի քարտ (2և I-551), որը պարունակում է Ձեր անունը, ծննդյան թվականը և լուսանկարը:
- Հպատակագրման վկայական (2և N-550):
- ԱՄՆ Քաղաքացիության և ներգաղթի ծառայությունների կողմից տրված աշխատանքի թույլտվության փաստաթուղթ (2և I-766), որը պարունակում է Ձեր անունը, ծննդյան թվականը և լուսանկարը:

**ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**  
 Տրամադրեք հետևյալ ՄԵԿ ԿԱՍ ՄԻ ՔԱՆԻ փաստաթղթերի հստակ և ընթեռնելի պատճենը կամ բնօրինակ փաստաթուղթը (ըստ նշված պահանջի):\*

- Աշխատանքային գործունեության տվյալներ**
- Անցյալ տարվա համար Ձեզ տրված առնվազն մեկ W-2 ձևի պատճեն, **կամ**
  - Առաջին անգամ Ձեր հայրը ներկայացնելու թվականին նախորդող տասներկու ամսվա ընթացքում Ձեր գործատուի կողմից տրված առնվազն մեկ վճարագրի կոնակի կամ վճարային ամփոփագրի պատճեն: Վճարագրի կոնակը կամ վճարային ամփոփագիրը պետք է նախապես տպված լինի և պարունակի հետևյալ բոլոր տեղեկությունները
    - Ձեր անունը կամ անվան սկզբնատառը և ազգանունը,
    - Ձեր սոցիալական ապահովության քարտի համարը, սոցիալական ապահովության քարտի համարի առնվազն վերջին չորս թվանշանները կամ աշխատողի նույնականացման համարը,
    - Ձեր գործատուի անունը,
    - վճարագրի կոնակի կամ վճարային ամփոփագրի տրման թվականը կամ վճարման ժամանակաշրջանը, որի համար տրվել է վճարագրի կոնակը կամ վճարային ամփոփագիրը,
- կամ**
- Հասցեն հաստատող փաստաթուղթ**
- Չփոփոխված բնօրինակ կենցաղսպասարկման հաշիվ (օրինակ՝ էլեկտրականության, գազի, աղբահանության, ջրամատակարարման կամ կեղտաջրերի հեռացման), կաբելային հեռուստատեսության հաշիվ, հեռախոսի հաշիվ, բանկային թղթակցություն, ներկա բնակարանի վարձույթի կամ վարձակալության պայմանագիր կամ քաղվածք գրավադրման փոխառության պայմանագրից, որը ցույց է տալիս Ձեր անունն ու ներկայիս ԲՆԱԿՈՒԹՅԱՆ հասցեն,
- կամ**
- Եթե չունեք բնակության հասցե, բայց ունեք բաժանորդային արկղ կամ մասնավոր փոստարկղ, ապա պետք է ներկայացնեք գրանցումը հաստատող փաստաթուղթ, որը ցույց կտա, որ Դուք արկղի վարձակալն եք կամ լիազորված օգտվողը,
- կամ**
- Սոցիալական ապահովության քարտի համարը հաստատող փաստաթուղթ**  
*Մի ուղարկեք սոցիալական ապահովության քարտի բնօրինակը կամ պատճենը: Այն չի բավարարի այս պահանջը:*
- Ամեն տարի Սոցիալական ապահովության վարչությունից (Social Security Administration) ստացվող **սոցիալական ապահովության անհատական հաշվետվության** ամբողջական պատճենը,
- կամ**
- Ծննդյան թվականը հաստատող փաստաթուղթ**  
 Տեղական, նահանգային կամ դաշնային գործակալության կամ օտարերկրյա կառավարության կողմից տրված **պաշտոնական** ծննդյան վկայական կամ Ձեր ծնունդը հաստատող այլ պաշտոնական վկայական:  
 Ծննդյան վկայականը, որն ունի «միայն տեղեկատվական նպատակով. ինքնության հաստատման համար վավերական փաստաթուղթ չէ» նշումը, չի համարվում ընդունելի հաստատում:

\* Եթե այլ փաստաթղթեր ևս պահանջվեն, Զբաղվածության գարգացման վարչությունը (Employment Development Department, EDD) կապ կհաստատի Ձեզ հետ: Պահեք այս ծանուցագիրը հետագա օգտագործման համար: